

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ

Մարդ արարածը չնաշխարհիկ գաղափարը ունեցած է տիեզերքին նման անհուն եւ անչափելի ժամանակը վերածել տարիներու, երկարող 365 օրերու վրայ, եւ անոնցմէ մէկուն տալ ՆՈՐ ՏԱՐԻ կամ ԱՄԱՆՈՐ անունը, որ իրականութեան մէջ նման է տարուան միւս բոլոր օրերուն: Եւ հետաքրքրականօրէն, աշխարհի բոլոր կրօնքներն ալ, քրիստոնէութեան նման ունին Նոր Տարուան մը առաջին օրը, որ դժուարութիւնները եւ յուսախաբութիւնները կը փորձէ մոռցնել, մեզի տալով նոր յոյս, միաժամանակ մեր երեւակայութեան առաջ բանալով նոր կարելիութիւններ, խոստանալով նոր ոյժ եւ եռանդ գտնելու մեր թերութիւններն ու սխալները եւ սրբագրելու զանոնք:

Տարօրինակօրէն, Ամանոր բառը անդիմադրելի ու վարակիչ հրապոյր մը ունի, նոյնիսկ չոր ու ցամաք հոգիներու համար, որոնք ի լուր այդ բառին կ'ոգեւորուին եւ իրենք եւս միացած ուրիշներու կը փորձեն թօթափել հինը եւ մոռնալ անցեալը, տեղ բանալով նոր վիճակի մը: Ու այս վիճակը յուսալու ինքնեկ պատրաստակամութիւնն է, եւ Նոր Տարուան կամ Ամանորի արշալոյսը, ՅՈՅՄԻ առաւօտն է պարզապէս, երբ յուսահատ սիրտերն անգամ տրամադիր կ'ըլլան մոռնալու անցեալի իրենց տխուր վերիվայրումները եւ աւելի լաւ տրամադրութեամբ եւ դրական մօտեցումով նայելու ապագային, որովհետեւ յոյսը միշտ աւելի դրական եւ աւելի տրամաբանական գաղափարներու եւ խորհուրդներու աղբիւր է: Կ'ըսուի թէ Մեծն Աղեքսանդր ամէն անգամ երբ կը պատրաստուէր պատերազմի իր մօտ կը կանչէր իր մտերիմ զօրավարները եւ իր ամբողջ ունեցածը կը բաժնէր անոնց: Ու երբ անոնք հարցնէին թէ ի՞նչ մնացած էր իրեն, կը պատասխանէր. «Յոյս»:

Սակայն ան՝ որուն հոգիին խորը ցամքած է հաւատքին ակը, չի՛ կրնար յուսալ, որովհետեւ յոյսը ծնունդն է հաւատքին: Եւ որքա՛ն ճիշդ կը հնչեն Պօղոս Առաքեալի խօսքերը. «Հաւատքը յուսացած բաներուն հաստատութիւնն է», որ կը նշանակէ թէ յոյսը միայն հաւատքով կրնայ զօրանալ: Ան որ կը հաւատայ արդարութեան եւ սիրոյ իտէալներուն՝ ան միայն կրնայ յոյս ունենալ: Այսպէս ըսած, չեն յուսահատիր միա՛յն անոնք՝ որոնք կը հաւատան Աստուծոյ: Կարենալ յուսալ, կը նշանակէ ապրելու եւ սիրելու հնարաւորութիւն եւ կամք ստեղծել: Անոնք՝ որոնք իրենց ձեռքը ունին հաւատքի իւղով լեցուած յոյսի լապտերը, աներկիւղ եւ անդեղեւ կը յառաջանան կեանքի ճանապարհէն: Եւ այս իսկ պատճառով, Ամանորը, Յոյսին տօնը՝ տօնն է նաեւ կեանքին, նորոգ կեանքի: Մենք իբր քրիստոնէաներ, մեր կեանքերու վերանորոգումը բարոյապէս իրագործած կ'ըլլանք երբ մեր կեանքի գլխաւոր եւ կարեւոր հանգրուաններուն առաջ կանգ առած կարենանք կողմնորոշուիլ թէ ի՞նչ պարտինք ընել մեր կեանքն ու կոչումը աւելի արդիւնաւէտ ու նպատակայարմար դարձնելու:

Եւ Ամանորի առաջին օրը ամենապատեհ առիթն է մենք զմեզ ոգեւորելու եւ պատրաստուելու մեր առաջ բացուող նոր ուղիներուն եւ նոր պարտականութիւններուն, որովհետեւ պարտականութեան գիտակցութիւնն է, որ մեր մէջ կը ստեղծէ պատիւի եւ արժանապատուութեան զգացումը, որ մարդուն կու տայ իր իրա՛ւ արժէքը: Եւ պար-

տականութեան այս գիտակցութիւնը պարտի ըլլալ առանցքը մեր կեանքին: Հեթանոսական օրերուն, ամսուան սկիզբները, մանաւանդ Յունուարը, կը կոչէին «Կաղանդ» կամ «ձայն տալու, յիշեցումի օրեր», որպէսզի մարդիկ ըստ այնմ պատրաստուէին իրենց կրօնական պարտականութիւններուն:

Շուտով, մեր կեանքի գիրքէն, որուն միջին ծաւալը սովորաբար 70-80 է, էջ մը եւս պիտի թերթենք, լեցնելու մեր կեանքը գալիք արկածախնդրութիւններով, դրական եւ ժխտական: Ու տարօրինակօրէն սակաւաթիւ են անոնք՝ որոնք երբեմն քաջութիւնը կ'ունենան թերթելու հին էջերը իրենց կեանքին եւ բան մը սորվելու անցեալին գործած իրենց սխալներէն:

«Սիոն»-ի սիրելի ընթերցողներ, Նոր Տարին կամ Ամանորը առէք իբր նշանաձող մը, որ ձեզի յիշեցնէ թէ դուք ո՞ւր կը կանգնիք եւ ի՞նչի կը հետամտիք: Եթէ սխալներ գործած էք՝ ի վիճակի՞ էք զանոնք սրբագրելու: Ի՞նչպէս գործածած էք ձեր ժամանակը, ծառայեցուցա՞ք էք զայն իր նպատակին, թէ Աստուծոյ այդ պարգեւը յումպէտս վատնած էք:

Շնորհաւորելով ձեր բոլորին Ամանորը, կը մաղթենք որ այս տարուան իւրաքանչիւր օրը բոլորիդ համար միշտ դառնայ Նոր Տարի մը, զոր դիմաւորէք ժպիտով, լաւատեսութեամբ, զուարթ տրամադրութեամբ, եւ մի՛շտ գիտակից Աստուծմէ ձեզի տրուած շնորհներուն: Քաջառողջութիւն եւ յաջողութիւն բոլորիդ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

Ն.Ա.Մ.

